№ 140 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6 — 1890 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6 № 140

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԱՌԱՋԻԿԱՑ 1891 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամվանը 6 ռուբլի.

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բաղաւնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հեռևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՐ

յայտնում է 3-րդ կարգի պ.պ. ընտրողների գիտութեանը, որ՝

1) Դեկտեմբերի 2-ի նիստի շարունակութիւնը նշանակվում է կիրակի, այս 1890 թուի դեկտեմբերի 9-ին, Թիֆլիսի Աղնւականների կալուածական բանկի թատրօնական դահլիճում, առաւօտեան 9 ժամին, 3-րդ կարգի ընտրողներից տասն և չորս ձայնաւորներ քուէարկելու համար այն պատճառով, որ դեկտեմբերի 2-ի ընտրութիւններին օրէնքով որոշված ձայների մեծամասնութիւն ստացան միայն տասն անձինք՝ 1891—1894 քառամեակի համար ձայնաւոր քուէարկվող կանդիդատների ամբողջ թուից:

2) Քուէարկութիւնը կը սկսվի առաւօտեան ճիշդ 10 ժամին և մինչև այդ ժամանակամիջոցը կընդունվեն և հաւատարմագրերը:

3) Դեկտեմբերի 2-ի նիստի քուէարկութեանը մասնակից եղողները պէտք է դահլիճը մտնելու ժամանակ ներկայացնեն իրանց ստացած և նոյեմբերի 25-ի նիստին դրոշմած տոմսակները՝ կարմիրները երկու քուէներ ստանալու համար և սպիտակները՝ մէկ քուէ ստանալու համար:

4) Ժողովն առաջին անգամ եկած երրորդ կարգի ընտրողները կը ստանան այդպիսի տոմսակներ ժողովը մտնելու ժամանակ: 1—2

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քուէարկութեան հնացած ձևը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի շերամապահական փորձնական կայարանը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արուեստի զարգացման արդելքները Թիւրքիայում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բարի մարդ.

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՀՆԱՑԱԾ ՁԵՒԸ

Մինչև այժմ մեզանում և ամբողջ Ռուսաստանում, թէ քաղաքային վարչութեան, թէ զանազան ուսումնական ընկերութիւնների և այլ ընտրութիւններում՝ շարունակվում է պահպանվել դաղտնի քուէարկութեան այն հնացած և անյարմար ձևը, որը այլ և այլ ոչ մի տեղ Եւրոպայում ընդունված չէ. դա գնատակներով քուէարկութիւնն է:

Եւրոպայում թէ քաղաքային և թէ պարլամենտական բոլոր ընտրութիւնների ժամանակ գործ է դրվում դաղտնի քուէարկութիւնը տոմսակներով (բիւլլետէններով): Դա քուէարկութեան համ ամենայարմար ձև է համարվում, համ էլ քուէարկութեան այդ ձևի շնորհով խնայվում է ժամանակը: Ընտրողը բերում է իր տոմսակը, որի վրա գրված է ընտրելիի անունը և դնում է այդ տոմսակը քուէտուփի մէջ, որը բանալիով փակված է լինում: Երբ քուէարկութիւնը վերջացրած է, քուէտուփը բացվում է ընտրողական յանձնաժողովի կամ ատեանի ներկայութեամբ և սկսում են քուէները հաշվել: Դա համարվում է վերջնական քուէարկութիւն, և ոչ մի տեղ չը կայ մեզ մօտ ընդունված հնացած և այլ և այլ զեղծումներին առիթ տուող՝ գընտակներով քուէարկութիւն անելու ձևը:

Բացի սրանից ոչ մի մեծ քաղաքում նոյն իսկ քաղաքային ընտրութիւնների ժամանակ, քուէարկութիւնը չէ կատարվում մի և նոյն դահլիճում, այլ կատարվում է միաժամանակ քաղաքի այլ և այլ թաղերում: Քաղաքը բաժանված է լինում մի քանի շրջանների և իւրաքանչիւր շրջանի ընտրողները ջոկ ջոկ, իրանց շրջանի մէջ են քուէարկում իրանց թեկնածուներին: Այդ ձևը ընդունված է այժմ նոյն իսկ Պետերբուրգում, որտեղ քաղաքային երրորդ կարգի ընտրողների թիւը հասնելով մի քանի տասնեակ հազարների, անհնարին կը լինէր տեղաւորել նրանց մի և նոյն օրը մի և նոյն դահլիճում:

Երևակայեցէք որ մեզ մօտ էլ, Թիֆլիսում, քաղաքային երրորդ կարգի երկու թէ երեք հազար ընտրողներ ուզենային բոլորն էլ մի և նոյն օրը ներկայանալ ընտրողական ժողովը,—հարցնում ենք ձեզ՝ հնարկայ արդեօք կատարել օրինաւոր և կարգին ընտրութիւններ այդ տեսակ ահագին բազմութեան մէջ, և որտեղ մեր քաղաքում կը գտնէք մի դահլիճ, որի մէջ տեղաւորվէին երկու թէ երեք հազար ընտրողները....

Ուրեմն վաղ թէ ուշ մեզ մօտ էլ պէտք է վերջապէս մտածեն, մանաւանդ ընտրողների երրորդ կարգի ընտրութիւնները կատարելու ժամանակ, բաժանել քաղաքը մի քանի ընտրողական շրջանների:

Այժմ գանք ընտրութեան ձևին: Եթէ օրէնքը պահանջում է դաղտնի քուէարկութիւն, — տոմսակներով ընտրութիւնն էլ դաղտնի է և կարող է վերջնական համարվել. նա համ աւելի յարմար է, ոչինչ զեղծումների առիթ չէ ներկայացնում, համ էլ նշանաւոր կերպով ժամանակ է խնայում: Իսկ ժամանակը,—քանի զարգանում են մարդիկ, քանի քաղաքակրթվում, քանի հասարակաց գործերն աւելանում, քանի հասարակաց կեանքը աւելի բարդ է դառնում,—աւելի և աւելի թանդ է դառնում, աւելի գին պէտք է ունենայ մեզ համար: Ամբողջ մի օր, զուցէ քանի մի կիրակի օրեր

ԹԱՆԴԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐԻ ՄԱՐԴ

—

Եւ սկսեց լալ Արմաղանը. նա արտասուք չէր թափում—նրա արտասուքը վաղուց էր, որ ցամքել էր, իսկ նրա փոխարէն արիւնով լցվում էին աչքերը, հեկեկում էր նա խղդոտ կերպով, դէմքը ուռում էր, կարծես սիրտը պոկ էր գալիս իւրաքանչիւր հեկեկումի հետ... Նա աւելի մի կատաղածի էր նմանում, քան լացողի:

—Հանգստացիր կնիկ, բացականչեց Սահակը կոկորդը դառնացած և փչաքաղվելով այդ կատաղի լացից—հանգստացիր: Աստուած էլ գիտէ, որ այս բօպէիս ձեռքիցս եկածը չեմ խնայի քո այդ սոսկալի լալը վերջացնելու համար. չը նայելով որ իմ ընտանիքի և իմ ապրուստը այդ անօրէններից է կախված, կանեմ ամեն ինչ, եթէ ձեռքիցս գայ, բայց հաւատացիր, խեղճ կին, որ ձեռքիցս ոչինչ չի գալ. դու ինքդ տեսար որ ձեռքիդ եղած քսմիսէր փաշաների արդար վճիռը միայն մի թեթև հեղնական ժպիտ գոյացրեց դատաւորների դէմքերի վրա. բայց, յարեց նա սենեակում մի պոռյտ գործելուց յետոյ կանգ առնելով Արմաղանի առջև—եթէ կուզես, ես այս բօպէիս կը նայեմ օրէնքի գրքերի մէջ և կասեմ թէ ո՞ր օրէնքով դու կարող ես տանդ տէրը համարվել... Այ, յարեց նա պահարանից Դէատուրի մի հատորը հանելով—ես փնտռեցի և գտայ մի օրէնք, լսիր՝ վասիաթութեան *) օրէնքների մէջ կայ մի յօդուած, որը ասում է, եթէ վասին կամ վէլին *) չդայել, ոչնչացրել են որբի ժառանգութիւնը, նրանց երաշխաւորներից նա, ով որ կարող է, պիտի տուժէ, եթէ ինքը—վասին ոչինչ չունի՞... արդ, քո վասիդ—Հաջի-Մանուկ աղան հարուստ է և պարտաւոր է իրան յանձնված կայքը վերադարձնել քեզ... այս օրէնքը կայ գրքերի մէջ, կայ փաստաբանների բերանի մէջ և երբեմն գործադրվում է բացառապէս մայրաքաղաքի մէջ միայն, իսկ այս խուլ անկիւնում այդ օրէնքների բերանը ցեխողներ շատ կան... քո բանդ չէ խթանի դէմ կռուելը, գտիր մի փաստաբան...

—Ոտացդ մեռնեմ, դոռաց Արմաղանը—վրայիս շապկին անգամ ծախեցի ու տուի էդ անխիղճ քօռ ու թոխալ փաստաբաններին, մինչև իսկ... Այ, էն նորաշինայ Մարտիրոսը ինձնով շատ զուարճացաւ, բայց ոչ ոք բացի ինքսից, բացի խայտառակութիւնից ոչինչ չը տուեց ինձ, երեսիս կաշին պատռեցին այդ անօրէնները, ինձ թիւրքերի ճանկը ձգեցին մի հասարակաց կնոջ պէս... ինձ սպանեցին... ես այդ բոլորը յանձն առի աղջկանս համար, նրան անօթի, անօժիտ չը թողնելու, նրան էլ իմ օրիս չը հասցնելու համար. ես աղջկաս սուրբ և կուշտ պահելու համար զոհեցի ամենը... էլ ինչ մնաց ինձ տալու, Աստուած իմ, Աստուած իմ, ինչ մնաց ինձ, հերիք է ինձ ցեխի մէջ թաթախես, հերիք է ինձ տանջես, անգութ Աստուած...

Ցանկարծ փողոցից մի ձայն ընդհատեց խեղճ կնոջ յուսահատ աղաղակը. այդ զուարթ սուր ձայնը կանչում էր:

—Սահակ էֆէնդի, այ Սահակ էֆէնդի...

Սահակը դողաց, իսկ Արմաղանը կատաղած վեր ցատկեց.

*) Հոդաբարձական.

*) Հոդաբարձու.

—Հանդարտ, դարձաւ նրան Սահակը—եթէ ներս գալու լինի՝ հեռացիր, խայտառակութիւն չը հանես, թէ չէ ինձ էլ ու ընտանիքս էլ կանբաղդացնես:

Եւ մօտենալով լուսամուտին, բաց արեց փեղկը, ստացաւ մի ժպիտ ու կռացաւ դէպի փողոցը:

Այնտեղ—փողոցի մէջ կանգ էր առել մի պատուական երկար մուշտակով, ալեխառն մօրուքով, կարմիր թշերով, վառ աչքերով ու զուարթ դէմքով յիսնամեայ մի անձ, որը ձեռքի բարակ փայտով ծեծում էր գետնի ձիւնը և երբեմն էլ կապում էր կարմիր ֆէսի վրա փաթաթած մի հատ մետաքսեայ եաղմայի ծայրը:

—Հրամայեցէք, Մանուկ աղա, գոչեց նրան Սահակը:

—Մինակ ես, հարցրեց զուարթ ծիծաղով Մանուկ աղան:

—Այ, մինակ եմ:

—Հա, այսօր էլ խօ դպրոց չունիք. քէֆը ձեր քէֆն է, մի տօն մահանայ էք անում ու գալիս էք տաք սենեակում նստում, հա, հա, հա, սուտ եմ ասում. վարժապետութեան պէս հանգիստ ու հեշտ ինչ արհեստ կայ... գնա դպրոց, մէկ երկու տղայի կարդացուր, քէֆի համար էլ մէկ երկու տղայի ճղճղացուր, յետոյ արի տուն, սօբան *) վառիր նստիր ու ամիսը լրանալուն պէս ջնգջնգալէն փողը ստացիր. հա, հա, հա, հանաքը մէկ կողմը կենայ, ձեր արհեստի պէս հեշտ արհեստ չը կայ, երանի ձեզ, ոչ ցաւ ունիք, ոչ դարդ. մեզ նման տասը փարայի եանից էլ էս ղիամաթին տասը ձիով չէք վազվզում...

Փողոցից այդ միջոցին անցնում էին երկու փաթթոցաւոր տաճիկներ. Մանուկ աղան ընդհատեց խօսքը, բարևեց նրանց, քէֆերը հարցրեց և երբ հեռացել էին, նորից դարձաւ Սահակին, ծիծաղեց ու ասեց.

—Այ, էդ անօրէնները... քէֆը դրանցն է. օրը մինչև երեկոյ ուտում, խմում են, իրանց սիրուն կնիկների հետ քէֆ քաշում. գործնքը ինչ է—ոչինչ. օրեկան երկու ժամ դատարանում նստում յօրանջում են, կամ տաքութիւնից քնում. դեռ չեմ հաշվում և այն, որ ուռած-փքված մարդ են գալիս չարշիում ու զուարճանում, տեսնելով թէ ինչպէս ամեն անցնող մինչև կէս մէջքը գլուխ է տալիս իրանց, խօսելիս էլ եթէ էֆէնդի են՝ բէյ են կոչվում, եթէ բէյ են՝ փաշայի տիտղոսին են արժանանում...

—Ցուրտ է այդտեղ, Մանուկ աղա, ընդհատեց նրան Սահակը—համեցէք վեր մի մի սուրճ էլ կը խմենք միասին.

—Ա՛յ սատանայ, ծիծաղեց Մանուկ աղան—երևի վախենում ես որ սենեակդ ցրտի բաց լուսամտից. ես չեմ մրսում, առաւօտեան մի քանի հատ «ծերոց դաւաղանով» փորս տաքացրել եմ... հա, հա, հա, ինչ արած, սկսում եմ ծերանալ, օղին էլ մեր դաւաղանն է... է, խեղճ ես, կը մրսես, ներս գամ. դէհ, դու պատուիրիր որ մի լաւ ներգիլէ չինեն, մինչև որ ես էդ քո անիծած երկար սանդուղներից կարողանամ բարձրանալ.

Ասեց, ծիծաղեց, յետոյ ուշադրութեամբ զննեց փողոցից անցնողներին, բարևեց մի քանիներին ժպիտով, ընդունեց ուրիշի բարևը հպարտութեամբ, երրորդի բարևին թեթև գլուխը շարժեց հեղնական ժպիտով և վերջապէս դիմեց դէպի դուռը, մուշտակի քղանցքը ժողովեց ու ներս մտաւ:

Իսկ Սահակը այդ միջոցին փակեց լուսամուտը

*) Վառարան.

շարունակ, կորցնել գնտակները քուէտուփերի մէջ գցելու վրա,—դա ժամանակի ապարդիւն կորուստ է, ժամավաճառութիւն է այժմեան հասարակական հանգամանքներում:

Ինչ է վերջապէս մեր քուէտուփերի ձևը. դա ամենաանճոռնի ձև է ամեն տեսակէտից: Նախ քուէտուփը այնպէս է շինված, որ սև ու սպիտակ քուէներ պարունակող արկղիկները չեն կողպվում և բացվում են դէպի այն կողմը, որտեղ կանգնած է լինում քուէարկողը, և ոչ թէ դէպի հակառակ կողմը: Ընտրողը, եթէ ուզենայ, իր ձեռքը տանելով արկղը ծածկող մահուդի կտորի տակ, միշտ կարող է դուրս քաշել արկղիկներից մէկը, հանել նրա միջից քուէների մի ահագին բուռն և անմիջապէս գցել այդ քուէները միւս արկղիկի մէջ:

Ոչ է երաշխաւոր, որ քուէարկութեան ժամանակ նշանակված ասիստէնտները, որոնք քուէտուփերի մօտ կանգնած, քուէներ են բաժանում ընտրողներին, զեղծումներ չեն անի ու իրանց լաւ ծանօթին կամ կուսակից մարդուն՝ մէկի տեղ տասս գնտակ կամ ա խ ի լ չեն տայ....

Բացի սրանից, երբ մի դահլիճում խռնված է մի քանի հարիւր հոգուց բաղկացած ահագին բազմութիւն, երբ այնպիսի աղմուկ ու խառնաշփոթութիւն է տիրում, որ ինչպէս ժողովրդական առածն ասում է „շունը տիրոջ չէ ճանաչում“,—ընտրողը կարող է քուէներ ներկայացնող տախիլներ ձեռք բերել որքան քանակութեամբ էլ ուզենայ. ծառաները վերցնելով նոյն իսկ դահլիճում դրված ահագին տոպրակներից տախիլները՝ անդադար լցնում են այդ տախիլներով ամաններ, մեծ քանակութեամբ թափում են գետին, տանում, գնում են քուէտուփերի առջև.... Վերցնողը վերցնում է, ինչքան կամենում է, և (հանաքը դէնը կենայ) կարող է ընտրողական ժողովում այդ տախիլներից ուտել էլ, ինչքան իր սիրտն ուզենայ....

Եւ դա մեզանում անուանվում է՝ օրինական գաղտնի քուէարկութիւն:

Վերջապէս ընտրողը, ընտրողական ժողով գնալով, գրպանները լի տախիլներով կարող է գալ. ով կիմանայ թէ դրանք քաղաքային, թէ մասնաւոր տախիլներ են: Եւ դա անուանվում է օրինական ընտրութիւն....

Ժամանակ է արդէն կատարելապէս վերացնել գնտակներով (կամ՝ տախիլներով) քուէարկութեան հնացած ձևը և օրինական համարել միմիայն տոմսակներով (բիւլլետէններով) քուէարկութեան ձևը, որը նոյնպէս գաղտնի քուէարկութիւն է և որը ընդունված է ամբողջ քաղաքակիրթ աշխարհում:

Գ. Ա.

և պատրաստվեց միւս սենեակը անցնելուն, երբ տեսաւ որ սենեակի դրան առջև դեռ ևս նոյն դիրքով նստած մնացել էր Արմաղանը:

—Վա՜հ, գոչեց նա վախեցած—դեռ դու այստեղ ես... չուտ, չուտ, անցիր միւս սենեակը—կնոջս մօտ, այժմ էլ գնալ չի լինի:

Արմաղանը ծանրութեամբ բարձրացաւ, սրբեց—տրորեց կարմրած աչքերը և հրելով կողքի դուռը, մտաւ միւս սենեակը:

—Ասա երկու սուրճ ու մի լաւ ներդիլէ պատրաստեն, գոռաց նրա ետևից Սահակ վարժապետը:

Գ.

Լսվեցան ծանր ոտնաձայներ և յետոյ Մանուկ աղայի ձայնը:

—Վա՜հ, տնաչէն, մամռում էր նա բարձրանալով—էսքան էլ երկար սանդուղք կը լինի, էս խօ արքայութեան քիչ մնաց հասնելու:

Եւ դուռը հրեց ու ակսեց կրկնակոշիկները հանել: Սահակը շտապով ուղղեց սաղիրի սպիտակ չորը ու մի քաղցր ժպիտով դիմաւորեց նրան:

Սակայն Հաջի-աղան դուռը հրած, կրկնակոշիկը հանած, կիսովին կանգ առնելով չէմքի վրա, դիտում էր գետնի վրա ընկած մի զոյգ քրքրված կօշիկներ: Նա իսկոյն ճանաչեց այդ ցեխոտ ու հազար տեղից ծակ կաշիների գնդերը: Դէմքը կնճռած կանգ առաւ, մի «հըմ» արձակեց ու ակսեց մտածել թէ ինչ գործ պիտի ունենար Արմաղանը Սահակ վարժապետի տան մէջ, Սահակ վարժապետի, որը գոնէ ամուրի էլ չէր....

—«Հըմ, մտածեց նա—ջահիլ է, Արմաղանն էլ դեռ վատ պատառ չէ... բայց ախր վարժապետի կինը շատ սիրունն է, տեսել եմ նրան նկեղեցում, մեծ-մեծ սև աչքեր ու կարմիր թշեր ունի. խօ գիժ չէ, որ իր «խուրնի-խրեղէն» *) կինը թողնի ու Արմաղանի ետևից ընկնի... չէ, այստեղ մի ուրիշ բան կը լինի... բայց ով գիտէ, գոցէ և...

—Ինչո՞ւ էք կանգնել ցրտումը, հաջի-աղա, ասեց վարժապետը նրան—այդ ինչին էք այդպէս նայում ու մտածում:

Եւ մօտ գնաց ու կամենում էր տեսնել թէ հաջին ինչին էր նայում:

—Ոչինչ, ոչինչ, թոթովեց հաջին շտապելով ներս գալ ու դուռը ետևիցը փակել—ձեր կատուին էի նայում, շատ սիրունն է...

—Կատու, մենք կատու չունենք:

—Հա՛, աչեց հաջին առանց կարմրելու—ուրեմն դրացիի կատուն կը լինէր... է, բարև վարժապետ, քէֆդ—հալդ, լա՛ւ ես խօ...

Ասեց, ուղղակի քայլեց դէպի սաղիրը, բարձրացաւ նրա վրա, մուշտակի երկար քղանցքները ծնկների տակն առաւ, նստեց դերձակի պէս ու մէջքը տուաւ անկիւնի բարձին:

—Է՛, շարունակեց նա գրպանից հանելով քէհրիբարի երկար մի մեղեսիկ—ասա տեսնենք, ինչ նոր լուր կայ դէսից—դէնից... հա, ներդիլէդ ուր է:

—Հիմա կը բերեն:

—Աստուած տունդ աւերի, *) ծիծաղեց հաջին—որ կնիկդ տանը չէ, ով պիտի պատրաստի ներդիլէն, փոքր եղբայրդ:

—Ինչից իմացաք որ կինս տանը չէ, հարցրեց զարմացած վարժապետը—տանն է ու հիմա էլ ներդիլէն ու զահվեն կը բերեն:

—«Հըմ, խօսեց ինքն իրան հաջին—սուտ էլ ասես կը լինի, որովհետև Արմաղանն էլ կարող է ներդիլէ ու սուրճ պատրաստել:

Բայց այդ միջոցին կարծես ջրելու համար նրա այդ կեղտոտ մտածութիւնը, դրացի սենեակից լսվեց մի սուր ճիչ, որին և հետևեց մանկական լացի ձայն:

Հաջիի դէմքը փոխվեց և փոխանակ կարմրելու, կնճռոտվեց.

—Պատիկդ է, հարցրեց նա—ինչ սուր ձայն ունի... և իսկոյն մտածեց «ուրեմն ինչ գործ ունի այստեղ Արմաղանը. մինչև որ չիմանամ, ոտքս դուրս չեմ դնելու այս անիցը»...

—Այո՛, ժպտաց վարժապետը—շատ լալկան է, մօրը շատ նեղութիւն է տալիս, իսկ ինձ էլ չէ թողնում քնելու:

—Ի՞նչ կայ, հեգնեց հաջին—դու էլ ջիդը դպրոցումն ես հանում, ուր ով գիտէ մինչև երեկոյ քնում ես:

—Ե՞ս, ծիծաղեց վարժապետը—ով է լսել որ Սահակը դասի ժամանակ քնի:

—Լա՛ւ, լա՛ւ, ինչու ես նեղանում, ես հանաք արի. հանաք էլ որ չանեմ, ինչ կայ. քնելը մեղք բան է. մինչդեռ աշակերտները կը զբաղվեն դաս սերտելով, դու էլ քնիր, ինչ կայ, չը քնես ինչ պիտի անես, խօ պարապ չէս նստելու և ճանճ կուլ տաս... հա, հա, հա, սկի չէս ասում թէ այժմ ձմեռ է, ճանճ որտեղից կը լինի... բացի դրանից, դասարանն էլ լաւ տաք կը լինի, ի հարկէ մարդուս քունը կը տանի. ապա ինչ անի հաջի Մանուկ աղան կամ ուրիշները, որոնք էս ցրտերին օրը քսան անգամ քաղաք են գնում—գալիս. մենք էլի լաւ ենք, քիւրք ունենք, սաքօ *) ունենք. ապա էն խեղճերը որ սկի մէկ լաւ շոր չունեն, նրանք ինչ անեն. օրինակ... էդ ծուռ Արմաղանը... խօ գիտես, էն գիժ կնիկը...

Եւ լռեց ու մի սուր ակնարկ ձգեց վարժապետի դէմքին:

—Գիտեմ, ասեց վերջինս փոքր ինչ կարմրելով:

—Ա՛... մտածեց հաջի-աղան—կեցիր տեսնենք ինչու կարմրեց:

Եւ շարունակեց բարձր ձայնով.

—Ո՞վ չէ իմանում որ Արմաղանը խենթ է, ջաղդի ծուռ է. *) նրա մանդալը, խօսելը, նրա շորերը—բոլորը վկայում են որ նա խենթ է... բայց, չէ՞ որ խենթն էլ գիտէ ցուրտը. բայ ինչ անի խեղճը... քանի անգամ կինս կանչել իր շորերից հագցրել է նրան. ես էլ (լաւ չէ ասելը, բայց խօսք եկաւ նրա համար եմ ասում) կանչել փող եմ տուել, հրամայել եմ որ նրան հաց տան ուտելու, տեղ տան քնելու, որովհետև ասում են, որ տան վարձ չէ կարողանում տալ՝ դուրս են գցում... այդ ես անում եմ, ի հարկէ պիտի անել, Աստծու ծեծածն է, պիտի պահել—պահպանել... էհ, խեղճ կնիկ. մի հասած աղջիկ էլ վզին է ընկել. տեսնես մէկ... մեր թաղումն են լինում շատ անգամ, ման են գալիս փողոցները, ձեռքեր—ոտները ցրտից ուռած—կապած, դողում են... ոչ ոք էլ չէ խղճում էդ թշուառներին, էլի մերոնք են նրան կանչում տաքացնում, տաք կերակուր են տալիս. ես էլ հրամայում եմ որ օգնեն նրան, խեղճ է... ինչ անեմ, սիրտս փոխր է, չէ դիմանում այդպէս խեղճութիւններ տեսնելով... խեղճ, խեղճ կնիկ...

(Կը շարունակվի)

---

*) Հիւրի-հրեղէն: *) Մի ոճ է:

*) Վերարկու:

*) Փողոցային խենթ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿԱՑԱՐԱՆԸ

—

Դարուս վերջին կիսում ազգերի և ժողովուրդների մէջ նկատելի է մի շարժում դէպի երկրագործութեան արդիւնաբերութիւնները: Գիտութիւնները աւելի լուրջ կերպով են զբաղվում այդ հարցով և ամեն կերպ աշխատում են զարկ տալ արդիւնաբերութեան զանազան ճիւղերին:

Բայց ցաւալին այն է, որ երբեմն առաջնորդվելով միայն ցանկութեամբ, անտես են առնում գործնականը: Այդ երևոյթը աւելի է աչքի ընկնում մեզ մօտ և մինչև անգամ կարելի է ասել, որ ցուցամոլութեան է հասնում:

Կարելի է, որ Եւրոպայում կան փորձնական երկրագործական կայարաններ, որոնք կոչված են նպաստել արդիւնաբերութիւնների զարգացման գործին: Բայց ինչով և ինչպէս են նպաստում նրանք: Այդ կայարանները մեծ մասամբ գիտական հետազօտութեամբ են զբաղված և չեն կարող ներկայանալ իբրև ժողովրդական արդիւնաբերութեան մօգելներ. թէև նրանց երկրամեայ և բազմակողմանի փորձերից ստացվում են գործնական խրատներ ժողովրդական արդիւնաբերութեան համար:

Մենք էլ բաղդ ունեցանք շերամապահական փորձնական կայարան ունենալու: Բայց արդեօք ինչ նպատակով է հիմնած այդ կայարանը. տեսական գիտութեանը ծառայելու, թէ ժողովրդի մէջ շերամապահութիւնը կատարելագործելու: Եթէ առաջին նպատակով է՝ կասենք որ դա միանգամայն աւելորդ է, քանի որ բազմաթիւ շերամապահական կայարաններ կան Ֆրանսիայում, Իտալիայում և Աւստրիայում, որոնք կառավարվում են անհամեմատ աւելի ձեռնհաս մարդկանցով, ուրեմն նախ իզուր ծախս կը լինէր և երկրորդ՝ դրանով ցոյց տուած կը լինէինք մեր անխոհեմութիւնը, ուրիշ ոչինչ. իսկ եթէ երկրորդ նպատակով է՝ մենք կասենք, որ ձեռք առած միջոցները միանգամայն անօգուտ են:

Ի՞նչ միտք ունի Թիֆլիսի նման մի քաղաքում շերամապահական կայարան շինել—ովքեր պէտք է յաճախեն այնտեղ, եթէ ոչ չինովնիկներ, արիստոկրատներ, վաճառականներ, աշակերտներ, աշակերտուհիք և այլն և այլն: Եւ ո՞րը պիտի լինէր այդ այցելութիւնների գործնական օգուտը, որի համար ահագին պալատներ են շինել Մուշտայիդում, ինչպէս արդէն «Մշակում» յիշատակված է: Բայց միթէ այդ էր կամ աւելի ճիշդ այդ պիտի լինէր մեր նպատակը: Ահա այդպէս են մեզանում շերամապահութիւնը զարգացնում:

Անցեալ տարի մենք մեր Երևանում կարդացած դասախօսութեան մէջ շօշափել էինք այդ հարցը, թէ ինչ կերպով կարելի է շերամապահութիւնը տարածել և կատարելագործել մեր երկրում և ակնարկել էինք նահանգական պրոֆէսորութեան վրա:

Արտասահմանում, մանաւանդ Ֆրանսիայում, կառավարութիւնից վարձվում են գիտնական և գործնականապէս էլ հմուտ երկրագործներ: Նրանց պարտաւորութիւնն է տարվայ ընթացքում գիւղից գիւղ շրջել և ամեն մի գիւղում յատկապէս տեղական հետաքրքիր հարցերի մասին խօսել: Հարցերն առաջարկում են գիւղացիք: Եթէ հարկ է լինում, նահանգական պրոֆէսորը իր ունկնդիրների հետ այցելում է այս կամ այն շերամատունը, արտը, այգին և տեղն ու տեղը գործնական դասեր է տալիս: Մեզանում փոխանակ փորձնական կայարան հիմնելու, լաւ կը լինէր, որ այդ փողը յատկացնէին մի հմուտ շերամապահի, որը շրջէր գիւղից գիւղ և գիւղացուն ցոյց տար, հասկացնէր իր սխալները: Բայց աւելի գործնական և օգտաւէտ միջոցը հետևեալն է մեր կարծիքով:

Պատրաստել շերամատան կահկարասիք, վարձել մի հմուտ շերամապահ, որն իմանայ տեղական լեզուներ. (դա միանգամայն անհրաժեշտ է): Ամեն գարնան այդ անձնաւորութիւնը իր կահկարասիքն առած գնայ մի գիւղ, ի հարկէ այնպիսի գիւղ, որտեղ շերամ են պահում, վարձի տուն, թթենի և մի 2 ծառայ և շերամ պահի: Շաբաթը երկու անգամ դասեր կարդայ զուգընթացաբար շերամների հասակին, գիւղացիներին միջոց տայ այցելելու իր շերամատունը և ինքն էլ պտտի գիւղացիների մէջ և տեղնուտեղը հարկ եղած խրատները տայ: Յաջորդ տարին փոխվի մի ուրիշ տեղ և այդպէս շարունակաբար: Ուրիշ խօսքով, պէտք է ունենալ մի համեստ շարժական շերամապահական կայարան, մի հմուտ և տեղացի շերամապահի ղեկավարութեամբ, փոխանակ Թիֆլիսի Մուշտայիդի պալատները:

Ահա թէ ինչ կերպ պիտի վարվի գիւղատնտեսական ընկերութիւնը:

Աւելորդ չենք համարում դէպքից օգտվելով, մի հարց ևս շօշափելու: Լուրեր են պատում և ինքս էլ սրանից մի երկու ամիս առաջ Էջմիածնի գործերին մօտ կանգնած մի բարձր հոգևորականից իմացայ, որ մտադրութիւն կայ Էջմիածնում մեղրամոմի գործարան բանալ:

Միտքը ինքն ըստ ինքեան շատ համակրելի է. բայց դարձեալ մի բան: Արդեօք Էջմիածինը հաստատ ստատիստիկական տեղեկութիւններ ունի, թէ մեզանում տարեկան որքան մեղր է արդիւնաբերվում, և արդեօք այդ քանակութիւնը կը բաւականացնի հիմնվելի գործարանին:

Եթէ դեռ ևս Էջմիածինը ստատիստիկական տեղեկութիւններ չունի, և կամ եթէ ունի էլ, բայց այդ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մեզ մօտ արդիւնաբերված քանակութիւնը հիմնվելի գործարանին բաւականութիւն չի տայ, այն ժամանակ ամենից առաջ պէտք է միջոցներ ձեռք առնի մեր երկրի մեղուապահութիւնը զարգացնելու և կատարելագործելու: Դրա համար նա մի նոյնանման միջոցի պիտի դիմի, ինչ որ վերյիշեցինք շերամապահութեան համար:

Երևան. Մ. Մուսինեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ հոգևոր բարձր իշխանութեան կարգադրութեամբ Թիֆլիսի կօնսիստորիայի նախագահ և Ս. Սարգիս վանքի վանահայր Յովհաննէս վարդապետ Շիրակունի, տեղափոխվում է Ախալցխա, յաջորդի պաշտօնով, իսկ նրա տեղը նշանակված է Կարսի յաջորդ Յուսիկ վարդապետ Մովսիսեանց: Եօթ տարվայ ընթացքում իր պաշտօնի մէջ գտնվելով, Շիրակունի վարդապետը իր եռանդով և բարք ու վարքով իմացաւ գրաւել հասարակութեան համակրութիւնը: Վանքը, որը նրանից առաջ խարխուլ դրութեան մէջ էր, նրա օրով կատարելապէս բարեկարգվեց: Այդ ուխտատեղին այժմ պատած է պարիսպով, քարայատակ դարձրած գաւիթը հարթ, և մաքուր է պահվում; խուցեր շինվեցան, ջուր անցկացվեց դէպի վանքը և այլն:

—

Թիֆլիսի դումայի երրորդ կարգի ձայնատուների ընտրութեան մասին տպված լուրի մէջ մի սխալ է մտել: Քուէարկվողները 145 հոգի լինելով, ուրեմն ոչ թէ 8 արկղերի մէջ սև ու սպիտակ քուէները չը հաշուեցին, այլ 143 արկղերում, քանի որ միայն առաջին արկղի բոլոր քուէները հաշուեցին (որոնց գումարն էր 578) և ամենավերջին արկղի (որի մէջ քուէների թիւը 614 էր): Իսկ թէ ինչքան սպիտակ ու սև քուէ կար մնացած 143 արկղերի մէջ,—յայտնի չէ: Երբ քուէները հաշուում էին, ընտրողներից ոմանք բարձրաձայն պահանջում էին, որ եթէ ոչ բոլոր արկղերի սև ու սպիտակ քուէները, գոնէ մի քանիսների (օրինակ, իւրաքանչիւր 10-րդ արկղի) թէ սև և թէ սպիտակ քուէների ընդհանուր գումարը հաշուեն և ոչ թէ միան սպիտակ քուէների: Սակայն ընտրողների այդ պահանջը չը կատարվեց: Բացի սրանից, դա ինչ քուէարկութիւն է, որտեղ քուէները (տախիլները) ածված են գետնի վրա և ուզողը կարող է հաւաքել, դա ինչ քուէարկութիւն է, որտեղ ընտրողները տուփի մէջ քուէ գցելուց առաջ անհաշիւ են սառնում քուէները, որքան քանակութեամբ էլ ուզենան, մանաւանդ որ

---

*) Աստուած տունդ աւերի՝ ասում է հայերը, երբ մարդ ինչ-որ բան է կորցնում:

*) Սաքօ՝ Սաքոյ անունի փոքրացուցիչ ձևն է:

թարրոնական դահլիճի կուլիսներում տեսիլներով մի առանձին քսակներ են դրված։

—

Ինչպես լսել են Պետերբուրգի լրագիրները, Պետերբուրգի համալսարանի ռեկտոր նշանակվել է պրոֆէսոր Նեկիտին։

—

Պետական խորհրդի մօտակայ նիստերից մեկում պիտի քննվի Մէջին-Ասիայում մտցնելի դատաստանական ռէֆորմների նախագիծը, որը մշակել է արդարադատութեան մինիստրութիւնը։

—

Պարատութիւններ են տեսնվում Պետերբուրգում բանալու հրաշէջային ցուցահանդէս։

—

«Новое Обозрѣніе» լրագիրը, իր կիրակի օրվայ համարում բաւական անախորժ տեղեկութիւններ է հաղորդում մի հայոց դպրոցի մասին, ասելով, որ այդ դպրոցում վառարաններ չեն վառում, ելեկտաներին ջուր չեն տալիս, ստիպում են, որ աշակերտները փայտի փող բերեն, սենեակները մաքրեն, խոհանոցի մէջ դանակ-չանգալ սրեն, և նոյն իսկ արտաքնոցը մաքրեն.... և այլն և այլն։ Կարծում ենք, որ լրագիրն առանց հաստատ աղբիւրների դիմելու, այդ տգեղ փաստերը չէր հաղորդի, ուստի ցանկալի է, որ լրագրի խմբագրութիւնը առանց տատանվելու յայտնէր, թէ այդ որ դպրոցն է։ Լրագիրը չէ յայտնել, թէ այդ որ դպրոցն է այդպիսի անկարգ դրութեան մէջ, այլ բաւականացել է յիշելով, որ դա բարեգործական ընկերութեան դպրոցն է։ Թող լրագիրը յականէ յանուանէ յիշէ դպրոցի անունը, և այն ժամանակ մենք կը սպասենք բացատրութեան դպրոցի վարչութեան կողմից։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Նոր-Բայազէտի գաւառի երկրորդ զինուորագրական կոչնաժողովը եղաւ նոյեմբերի 15-ին, Ներքին-Ղարանլու գիւղում։ Ընտրվեցան ծառայութեան համար 32 հոգի։ Ընտրածների վերջին համարը հասաւ 88-ին։ Նոյեմբերի 28-ին լինելու է զինուորական առեանի ժողովը Նոր-Բայազէտում»։

—

Կարսից մի պարոն խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Այս տարվայ օգոստոս ամսին ես թարգմանեցի Գարշինի «Զորս օր» պատկերը, բայց այդ միջոցում ձեր լրագրի մէջ յայտարարվեց, որ մի այլ անձնաւորութիւն արդէն թարգմանել է նոյն պատկերը, որը և շուտով կը տպագրվի։ Ուստի խնդրում եմ ձեզ տպել, որ եթէ մինչև առաջիկայ յունվար ամիսը պարոնի թարգմանութեան մասին ոչինչ լուր չը լինի, այն ժամանակ ես լինձ իրաւունք կը համարեմ տպագրել իմ թարգմանութիւնս»։

—

Մեզ գրում են Նոր-Բայազէտից հետեւեալը. «Ահա 15 օր է, որ մեր քաղաքի թաղօնասէրները ամեն օր ժողով են անում ուսումնարանում, յօգուտ նոյն ուսումնարանի մի որ և է ներկայացում տալու համար։ Նախ դիտաւորութիւն ունէին ներկայացնել «Կողոպտված պօստը» դրաման, բայց դերասանների մէջ ծագած անհամաձայնութեան պատճառով այդ ներկայացումը դուրս չեկաւ։ Այժմ մտադիր են խաղալ «Գասպար-ամի» դրաման, Պեշիկթաշլեանի «Արշակ Բ.» ողբերգութեան առաջին գործողութիւնը և մի վոդեվիլ»։

—

Մեզ գրում են Գանձակի նահանգի Փիք գիւղից, որ թէ այդ գիւղում և թէ մօտակայ միւս գիւղերում վերջին ժամանակներս սկսել է կենդանների մէջ տարածվել աղաբ ասված տարափոխիկ հիւանդութիւնը և հիմա հետզհետէ աւելանում է գիւղացիների մէջ հիւանդ տաւարի մսի գործածութիւնը։ Ցանկալի է, աւելացնում է թղթակիցը, որ գիւղական տանուտէրերը արգելեն հիւանդ տաւարի մսի ծախելը։

—

Մեզ գրում են Գանձակից, որ զինուորագրութիւնը հայ գիւղացու համար այլ ևս չէ ներկայացնում այն դժուարութիւնները, որ կային առաջին ժամանակները. այժմ գիւղացին նոյն իսկ ուրախ է, որ զինուոր դառնալով՝ ֆիզիկապէս կը կազդուրվի, նոր կեանք կը վայելէ, մի քանի նոր բաներ կը սովորէ։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են, որ այնտեղի բաղնիները, թեով չորս հատ, որոնք պարսկական ճաշակով են շինված և թուրքերի սովորութիւն են, շատ կեղտոտ են պահվում։ Երբ անմաքուր գողտրչիները այն աստիճան անտանելի են դառնում, որ մինչև իսկ թուրք բաղնիսպանի բթացած զգայարանների վրա են ներգործում, այն ժամանակ նա խունկ է ծխում, որպէս զի մեռցնէ այն անպիտան հոտերը, որոնք տարինեով բան ունեն դրած բաղնիսների պատերի մէջ։

—

Մեզ գրում են Ղուբայից, որ առևտուրը այնտեղ, համեմատած անցեալ տարվայ հետ, շատ լաւ է. մանաւանդ լաւ են ծախվում մանուֆակտուրային ապրանքները։

—

Այս օրերս մեր խմբագրատուն մտան երկու կոյսեր, որոնք խնդրում էին կամ իրանց ապրուստի միջոց տալ, կամ մի օրինաւոր պարապմունք։ Նրանց ասածից երևաց, որ իրանք չորս հոգի են, և եկել են սրանից մի տարի առաջ Զմիւռնիային մօտիկ մի գիւղից։ Եղել են Ռուսաստանի և Կովկասի մի քանի քաղաքներում, և վերջապէս Շուշի են գնացել՝ այնտեղի կուսանոցը մտնելու համար։ Շուշու կուսանոցում նրանց չեն ընդունել, որովհետև այդ չորս կոյսերը նիւթական ոչինչ միջոց չեն ունեցել։ Շուշուց նրանց ուղարկել են Թիֆլիս։ Շուշու հայոց հոգևոր կօնսիստորիան նրանց ձեռքը տուել է մի պաշտօնական թուղթ, որը գրված է Թիֆլիսի կօնսիստորիային, որից և խնդրում է այդ կոյսերին բնակարան և ապրուստ տալ մինչև նրանց գործ գտնելը։ Թիֆլիս գալով, կոյսերը ոչ մի օգնութիւն չեն գտել, մնացել են անտէր, և ինչպէս միշտ պատահում է, մի եզք են գտնել միայն,—դիմել մեր խմբագրատունը։ Իսկ խմբագրատան կողմից մի քանի խորհուրդներ, ափսոսանքներ և յոյսեր, ուրիշ էլ ինչ կարող է լինել չորս կոյսերի համար, որոնք իրանց համար պաշտօն են խնդրում։ Չը գիտենք արդեօք Թիֆլիսի կուսանոցը տեղեկութիւն ունի դրանց մասին, և արդեօք կուսանոցի պարտքը չէ առժամանակ դէթ պատսպարել իր հեանոզներին։

—

Պիատիգորսկից տացանք պ. Ալէքսէյ Մելիք-Սարգսեանից 3 ռուբլի յօգուտ չքաւոր օրիորդ Սօմխեանի։ Ուրեմն նախկին 100 ռուբլու հետ կունենանք այժմ 103 ռուբլի։

—

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 6-ին, Թիֆլիսի Ժողովարանում անդամների ընդհանուր ժողով է նշանակված։ Հաւանօրէն նիստը շատ հետաքրքիր պիտի լինի, քանի որ քննվում է Ժողովարանի ձմեռվայ բնակարանի հարցը։ Բնակարանի պայմանաժամը այս տարի լրանում է։ Իշխան Մաւխրանովի, որի տան մէջ այժմս զետեղված է Ժողովարանը, վարձը աւելացնում է մինչև 10 հազար ռուբլի, առանց որ և է նորոգութիւն անելու. աւագների ժողովն անհնարին գտնելով այդքան փող վճարելը, վճռել է նոր բնակարան վարձելու։ Աչքի առաջ կայ Իշմիրեանցի (նախկին Արշակունու) տունը, որը մի ժամանակ Կրուժոկի ձմեռվայ բնակարանն էր։

—

Դեկտեմբերի 2-ին Գիմնազիայի շինութեան մէջ տեղի ունեցաւ ռուսերէն լեզուով երրորդ ժողովրդական դասախօսութիւն։ Այս անգամ դասախօսութեան նիւթն էր «Ռուսաստանի մկրտութիւնը»։ Այդ օրը հրաւիրված էր և նուագածուների խումբ։

—

Քաղաքային դումայի վերջին նիստը չը կայացաւ ձայնաւորների քչութեան պատճառով։ Որտեղ աղմուկ, իրարանցում, խառնակութիւններ, դատարկ խօսակցութիւններ և ինտրիգաներ կան, այնտեղ ամենքն են վազում, իսկ որտեղ հարկաւոր է նստել և առանց ջղեր ցնցելու քաղաքային ընթացիկ գործերը վճռել,—այդտեղ ամենքը բացակայ են։

—

Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը, իր նիւթական սուղ միջոցները կարգի բերելու համար առաջիկայ կիրակի օր պարահանդէս է կազմելու։ Մի քանի օր սրանից առաջ յօգուտ նոյն ընկերութեան կայացրած ներկայացումը մուտքի կողմից անաջող էր, ուստի հասարակութեան վերա պարտք կայ այնպէս անելու, որ գոնէ պարահանդէսը լաւ եկամուտ տայ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

«Journal de la Chambre de Commerce de Constantinople» թերթից առնելով, արտասահմանի հայոց հրատարակութիւնները հաղորդում են հետեւեալը.

«Ցաճախ կը հարցուի թէ ինչու Ցաճկաստանի մէջ արուեստագիտական ձեռնարկութիւնը բազմաթիւ և արդիւնաբեր չեն։ Անտարակոյս Ցաճկաստանի մէջ ալ՝ ինչպէս գրեթէ Եւրոպայի ամէն երկիրները, գործատանց հիմնարկութիւնք այն օրէնքներէ և կարգադրութիւններէ կախում ունին, որոնք անյարմար, վատառողջ և վնասակար համարված և կամ դրացեաց անտանելի երևցած արուեստագիտական զանազան ճիւղերուն հետ յարաբերութեան մէջ են։ Այս նկատմամբ՝ միշտ հասարակաց գործոց պաշտօնարանին վերջնական կարգադրութեանց դիմելու է։ Կայսերական իրատ մը կայ՝ որ ամէն գործարանատեարց ձեռնարկութեանց մեծամեծ դիւրութիւններ կընծայէ, զ. օր. մեքենայից, գործեաց, ատաղձի... մաքսէ ազատ ըլլալն։ Ցաղագայրն ըստ պարագայից անշուշտ Ցաճկաստանի մէջ յառաջ եկած և պետութեան մէջ՝ տեղէ մ'ուրիշ տեղ փոխադրվող կամ արտածեալ վաճառքներն ալ՝ մաքսէ և այլ հարկերէ ազատ պիտի ըլլան։

Հոս քննելու տեղը չէ, թէ ուրիշ երկիրներն իրենց արուեստագիտաց ինչ առաւելութիւններ կը շնորհեն։ Ցաճկաստանի նկատմամբ՝ անկասկած պարագայ մը կրնայ համարուիլ այն՝ որ այնպիսի արտօնութիւններ տրուած են, որով այս կամ այն ճիւղին մէջ մրցութիւն ընել անհնար եղած է, ասով տեսակ մը մենավաճառութիւն կը կազմուի, զոր ոչ հասարակաց՝ և ոչ տէրութեան շահը կրնայ արդարացնել։ Բայց այս պարագան ալ կառավարութեան արուեստներն կերպաւորելու և զարգացնելու ունեցած փափաքովն կը բերանք արդարացնել, մասամբ ալ քանի մ'օտար դրամատեարց երկիւղին պէտք ենք վերածել, որոնք կը կարծէին, թէ Ցաճկաստանի մէջ առանց մենավաճառութեան բան մը չի կրնար յաջողիլ։ Համոզուած ենք, թէ հասարակութեան օգտակար, և մեծագործ ձեռնարկութեանց, ինչպէս՝ երկաթուղեաց, ջրանցից, թրամվէյից, նաւամատոյցներու շինութեան, լուսաւորութեան... համար մենավաճառութիւն անհրաժեշտ հարկաւոր էր, վասն զի ասոնք շատ մեծ գումարներ կը պահանջեն. բայց փոքր արուեստից համար, որոնք այնչափ մեծ գումարներու պէտք չունին, մենավաճառութիւն տալն՝ արուեստագէտները կը ջղատէ, և ձեռնարկութեան ոգին և մրցութիւնը կը նուազեցնէ, որոնք ուղղակի վաճառականական և արուեստագիտական զարգացման և յառաջադիմութեան հիմը կը կազմեն։

Ուստի բաղձալի է որ թէ տեղացի և թէ օտար դրամատեարք գիտնան՝ որ զ. օր. խաղախորդութեան, խեցեղինաց, կաւեղինաց գործատուն մը շահաբեր ընելու համար մենավաճառութիւն ամենեին հարկաւոր չէ. այսպիսի ձեռնարկութեան մը յաջողութիւնն առատօրէն գտնուող անգործ նիւթն՝ ըստ կարի նուազ բանողէքով գործածել կարենալէն կախուած է։ Մենք կը կարծենք թէ Ցաճկաստանի արուեստից զարգացման ու յառաջադիմութեան մի միայն արգելքներն այսպիսի մենավաճառութիւնք են»։

—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մակեդոնիայում նոր շարժումներ տեղի ունեցան։

—Թիւրքաց մեծ վիզիրի օրգանը այս օրերս մի յօդուած տպագրեց, որի մէջ պաշտպանում է այն միտքը, թէ պէտք է Բալկանեան պետութիւններից մի դաշնակցութիւն կազմել՝ Թիւրքիայի գերիշխանութեան ներքոյ։ Այդ դաշնակցութեան մէջ թիւրք լրագրի կարծիքով պիտի մտնեն՝ Սերբիան, Ռումինիան, Զերնոգորիան և Յունաստանը։ Բոլգարիան չը պիտի մտնի այդ դաշնակցութեան մէջ։ Ինչի վրա է հիմնում իր այդ ցանկութիւնը թիւրք լրագիրը,—այդ նա չէ պարզում։

—Լօնդօնից գրում են, որ այնտեղի պաշտօնական շրջաններում այն կարծիքի են, որ Գլադստոն չի հաշտվի Պարնելի հետ և ուրեմն Պարնել ստիպված կը լինի հեռանալ քաղաքական ասպարէզից։

—Գերմանիայում մտադրութիւն կայ նշանաւոր կերպով աւելացնել արհեստագործական դպրոցների թիւը։

—Լրագիրները հաղորդում են, որ Իտալիայի թագաւոր Ումբերտոս մտադիր է այցելել Պարիզ։

—Արեւելեան Ռումելիայից բազմաթիւ մահմետականներ գաղթում են դէպի Թիւրքիա։

—«Բէյտէրի գործակալութիւնը» հաղորդում է, որ իրլանդական ժողովրդի մեծամասնութիւնը հակված է Պարնելից յետոյ ընտրել ազգային կուսակցութեան պարագլուխ Մակ-Կէրտիին։

—Գերմանական կայսր Վիլհէլմի ճառը կլասիական ուսման դէմ՝ մեծ ապաւորութիւն գործեց ոչ թէ միայն Գերմանիայում, բայց և ամբողջ Եւրոպայում։ Կրկին ամբողջ քաղաքակիրթ աշխարհի հայեացքները ուղղված են դէպի Բերլին։

—«Allgem. Reich-Corresp.» լրագիրը հաղորդում է, որ այս բոպէիս Կոխի նորագիւտ հեղուկի պաշարը գրեթէ սպառված է, այնպէս որ այդ հեղուկը ոչ թէ միայն չէ կարելի ոչ մի տեղ արտահանել, բայց և նրան ոչ ոքին չէ կարելի տալ։ Մի երկու շաբաթից յետոյ հեղուկը նորից կը պատրաստվի բաւականաչափ քանակութեամբ։

—Լրագիրները հաղորդում են, որ նոյեմբերի 23-ին վախճանվեց Նիցցայում Գամբէտտայի հայրը, 83 տարեկան հասակում։

—Լսվում է, որ մարկիզ Սալսբրի ջանքեր է անում Պարնէլին իր կողմը գրաւելու։

—Աւստրիայից հեռագրում են լրագիրներին, որ առաջիկայ 1891 թուից սկսած Լվովի պաշտօնական լրագիրը կը հրատարակվի մի աւելուածով՝ ռուսինական լեզուով։ Գալիցիայի բոլոր պաշտօնական տեսանների և ծխական քահանաների համար այդ լրագրին գրվելը պարտադիր կը լինի։

—Բարօն Հիրշ նուիրեց 12 միլիոն ֆլորին յօգուտ Գալիցիայի չքաւոր ազգաբնակութեան։ Կառավարութիւնը ընդունելով այդ նուիրատուութիւնը, շուտով հաստատելու է այդ փողերը բաժանելու եղանակի ծրագիրը։

—Սերբիայի արմատական կուսակցութիւնը դիտաւորութիւն ունի պաշտպանելու Նատալիա թագուհու սկզբունքային ներկայացրած յիշատակագիրը։

—Իտալական մինիստր—նախագահ Կրիսպիի պաշտօնական օրգան՝ «Riforma» լրագրում այս օրերս լոյս տեսաւ մի կծու յօդուած այն մարդկանց դէմ, որոնք պաշտպանում են եգիպտների Գերմանիա վերադառնալու միտքը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական մի քանի բժիշկներ բազմաթիւ փորձեր անելուց յետոյ, առաջարկում են՝ պարտադրացուցիչ դարձնել եղջիւրաւոր անասուններին «կօխինի» պատուաստելը։

* * *

Լօնդօնում վախճանվեց անգլիացի յայտնի պուբլիցիստ Զարլզ Մէրվին, 46 տարեկան հասակում։

* * *

Այս օրերս Վիլհէլմ երկրորդ կայսրի սափրիչը գաղտնի կերպով յայտնեց թէ ինքը գտել է դիֆտերիտի դեղը։ Այդ սափրիչի անունն է Ռիգէր։ Կայսրը խօսք տուեց նրան փորձել տալ այդ դեղը՝ Կոխի և Բերգմանի վերահսկողութեան ներքոյ։ Ռիգէր իր գաղտնիքը պետութեանը վաճառելու համար պահանջում է 150—200 հազար մարկ։

* * *

Ժընեվի կառավարութեանը մի խնդիրք է տրված, որով խնդրում են միջոցներ ձեռք առնել խմիչքների պանդոկների չատանալու դէմ։ Ժընեվում 65 մարդու վրա մի այդպիսի պանդոկ է գալիս։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍՍԱՑԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 դեկտեմբերի։ Պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ երէկ թագաժառանգ Յեսարեվիչ իր ուղեկիցներով հասաւ Աղէն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 դեկտեմբերի։ «Гражданинъ» լրագիրը լսել է, որ Օլդենբուրգեան պրինցը կառավարութեանն է նուիրել իր փորձնական հիմնարկութիւնը։ Պրինցը մնում է այդ հիմնարկութեան հոգաբարձու։

ՊԱՐԻԶ, 4 դեկտեմբերի։ Լաբրիւեր, որը նպաստել է Պոդլէսկու փախչելուն, և տիկին Դիւկերսի, որը թագցրել է նրան, այսօր առաւօտ ձերբակալվեցան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 դեկտեմբերի։ Պաշտօնական հեռագիրը Աղէնից հաղորդում է, որ ծովային ճանապարհորդութիւնը շատ աջող էր։ Թագաժա-

ռանդ Ցեսարեվիչ Օգոստափառ ուղեկիցներով դեկտեմբերի 4-ին դիտաւորութիւն ունէր ուղեւորվել դէպի Բոմբէյ:—«С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ ստացված է Չինաստանի կայսրի հրամանը, որով թոյլ է տրվում ռուսներին առեւտուր անել Շէնսի նահանգում և ռուսաց հիւպատոսարաններ հիմնել այդ երկրի նշանաւոր կենտրոններում: Արդէն ռուսաց պլխսի և մահուդի Չինաստանում առնելը ապահոված է:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ.

Դեկտեմբերի 4-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. . .	87 ր.	—	կ.
Բերլինի վրա 100 մարկ — . . .	42 »	65	»
Փարիզի վրա 100 ֆրանկ — . . .	34 »	30	»
Ոսկի — — արժէ . .	7 »	06	»
Մաքսային կուպօններ — . . .	140 »	75	»
Արծաթ — — — . . .	1	10	»
Բորսային դիսկօնտներ — . . .	4 և	$4^3/_4$%	»
Պետ. բանկի 5% տոմս 1-ին շրջանի.	103 »	25	»
— — — — 2-րդ —	102 »	75	»
— — — — 3-րդ —	102 »	50	»
— — — — 4-րդ —	102 »	50	»
— — — — 5-րդ —	103 »	—	»
— — — — 6-րդ —	2 »	50	»
6% ոսկեայ րէնտա	148 »	25	»
4% ոսկեայ փոխառութիւն	134 »	50	»
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	103 »	50	»
— — — — 2-րդ —	104 »	50	»
— — — — 3-րդ —	106 »	25	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	238 »	25	»
— — երկրորդ —	217 »	25	»
Պետական. երկաթուղային րէնտա .	103 »	50	»
$5^1/_2$% րէնտա	106 »	—	»
4% ներքին փոխառութիւն . . .	91 »	25	»
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	103 »	—	»
$5^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի.	105 »	50	»
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. միասլ. .	141 »	—	»
— — — — թղթադ.	101 »	75	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիները. .	99 »	—	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	97 »	25	»
Օդեսայի — — .	99 »	50	»
Թիֆլիսի — — .	— »	—	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— »	—	»
— — Քութայիսի — — .	— »	—	»

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ տնօրէնութեամբ կիրակի, դեկտեմբերի 9-ին, ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ պիտի կատարվի Մուղնու եկեղեցու երեցփոխանի ընտրութիւնը: Ուստի յիշեալ եկեղեցու մեծ. ծխականները հրաւիրվում են ներկայ լինելու ընտրութեանը, որը կատարվելու է ս. Գայիանեան օրիորդաց դպրոցի դահլիճում:

Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգութեանց վերատեսուչ՝ Յովհաննէս քահանայ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

1—2

Նորին վեհափառութեան հրամանով բոլոր հայոց օրիորդաց ուսումնարաններում, որպէս ձեռնարկ ընդունված „ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ և ԾԱՂԿԱԳՐԵՐ ՁԵՌԱԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ“ անունով հրատարակութիւնս հարկաւոր քանակութեամբ ունենալու համար, խնդրեմ իւրաքանչիւր ուսումնարանի վարչութիւնից դիմել ինձ, հաշւելով իւրաքանչիւրը, միայն աշակերտուհիների համար, փոխանակ 50 կոպէկի, առանց ճանապարհածախսի՝ 40 կոպ., ճանապարհածախսով:

Շուտով տպագրվելու է կանվայի վրա կարելու համար 25-ի չափ ներկերով „Ոգի Հայաստանի“ պատի գործի համար, որի գինն է 2 րուբլի, ճանապարհածախսով և „Հայկական դրօշմ“ բարձի երեսի համար, գինն է 50 կ. ճանապարհածախսով: Սրանք կարող են ինքն ըստ ինքեան ծառայել իբրև զարդ ամեն տան մէջ:

Որովհետև այս հրատարակութիւնների քանակութիւնը սահմանափակված է և միմիայն ինձ մօտ են ծախվելու, ուստի ցանկացողները թող բարեհաճեն անպատճառ վաղօրօք ինձ դիմել: Ծախս քիչ լինելու և իրանց յարմարութեան համար՝ փոքր տեղերից կարելի է միասին դիմել: Իմ հասցէս. С. Петербургъ, Невскій просп. Армянская церковь, Вардану Варданяну.

2—10

Մ. Գ. ՑԷՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ

ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, Նոր ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷՆԵՐ և ԼՈՐՆԷՏՆԵՐ: Թատրօնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՉԱՓԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վաննաների համար: Վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ ջերմաչափեր: Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, Նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր:



Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապակիների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են:

43—50 (հ)

ԾԽԱԽՈՏԻ ԷԿՍՏՐԱԿՏ

ՆԻԿՕԼԱՅ ԲՕՂԴԱՆՕՎԻ ԵՒ ԸՆԿ.

ԱՄԵՆԱԼԱՒ ԵՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ ոջլոտներին, եղջիւրաւոր և այլ կենդանիներին բորոտութիւնից և կաշու ուրիշ ամեն տեսակ հիւանդութիւններից բժշկելու, նմանապէս ձիերին, շներին կաշու ամեն տեսակ հիւանդութիւններից և թռչուններին պարազիտներից բժշկելու համար:

ՊԱՀՊԱՆՈՒՄ է ամեն տեսակ ծաղիկներ, բոյսեր, ծառեր և բանջարեղէններ՝ որդներից, թրթուրներից և ուրիշ միջատներից:

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ Թիֆլիսում՝ Դեղագործական Ապրանքների վաճառման ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված կովկասեան ընկերութեան մէջ:

22—25 (հ)



Օգոստոսի 7-ից 1890 թ. բացվում է երաժշտական գործիքների և նոտաների կովկասեան կենտրօնական դէպօ:

ԵՂԲ. ԴԻՏԷՐԻԽՍԻ

առաջին ս. պետերբուրգեան դաշնամուրային գործարանի

ՌՕԵԱԼՆԵՐ ԵՒ ՊԻԱՆԻՆՕՆԵՐ

Մ. Շրէդէրի, Բէկկէրի, Սմիդտի, Միւլբախի,



Գէտցի, յայտնի արտասահմանեան գործարանների՝ Շիդմայէրի, Բլիւտնէրի, Բէխշտէյնի: Գլավաչէի արմօնապիանօ: Շիդմայէրի հարմօնիումներ: ԾԱԽՎՈՒՄ Է ԵՒ ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ: Թիֆլիս. Դվօրցօվայա փողոց, Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկի տան մէջ

13—16

Պետերբուրգ ուղևորվելով, ես մնալու եմ ԹԻՖԼԻՍՈՒՄ մի շաբաթվայ չափ և … ձամբ ցոյց կը տամ ու կը բացատրեմ հասարակութեանը թէ ինչ ձևով պէտք է վ… իր հնարած ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԸ ծխողների համար, որը ամենևին ենթարկվում եղանակի փոփոխութեան:

Այդ գործիքը առաջին անգամն է վաճառվում Ռուսաստանում: Իւրաքանչիւր գ… ծիքը կրում է Պետերբուրգի քաղաքապետի գրաւոր թոյլտուութիւնը:

Գործիքը ծախվելու է ամեն օր, բացի կիրակի օրերից, առաւօտեան 9 ժամից մ… 3 ժամ կէսօրից յետոյ և 4 ժամից մինչև 7 ժամ երեկոյեան, Ցէյտլինի մագազի… Պալատի առջև:

Վաճառականների համար զիջում կը լինի: Կենում եմ „Սեվէրնիե Նոմէրա“ բանոցում:

Ամերիկական քաղաքացի ինժենէր Լ. Կ.

4—

Կիրակի, դեկտեմբերի 9-ին, Թիֆլիսի ժողովարանում լինելու է ՊԱՐԱՀԱՆԴ… ՑՕԳՈՒՏ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ: Տոմսակների գինն է 2 րուբլի: Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ ժողովարանում, շվէյցարից: Սկիզբն է… րեկոյեան 9 ժամին:

1—2

Открыта подписка на 1891 годъ

НА ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКУЮ и ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕ…

„Съ обширнымъ НЕФТЯНЫМЪ ОТДѢЛОМЪ“

„КАСПІЙ“

(ИЗДАНІЕ ГОДЪ ОДИНАДЦАТЫЙ)

Значительно увеличивая съ 1 января 1891 года форматъ газеты (до размѣровъ газеты „Кавказъ“), редакція нашла возможнымъ оставить прежнюю подписную цѣну, такъ что въ 1891 году газета „Каспій“ будетъ стоить:

	Р.	К.		Р.
Съ доставкой: въ годъ	7	—	Съ пересылкой: въ годъ	8
„ „ на полгода	4	—	„ „ на полгода	5
„ „ на 3 мѣс.	2	50	„ „ на 3 мѣс.	3
„ „ на 1 мѣс.	1	—	„ „ на 1 мѣс.	1

Допускается разсрочка платежа подписныхъ денегъ по соглашенію съ редак… но съ тѣмъ, однако-жъ, условіемъ, чтобы при подпискѣ было внесено не менѣе 3 … для городскихъ и 4 руб. 50 коп. для иногородныхъ подписчиковъ, 15 февраля 2 … 15 марта 2 руб.

КРОМѢ ОБЫЧНЫХЪ ГАЗЕТНЫХЪ ОТДѢЛОВЪ,

„Каспій“ имѣетъ обширный „Нефтяной отдѣлъ“, спеціально преслѣдующій … работку вопросовъ русскаго нефтяного дѣла. Въ составъ этого отдѣла входятъ: а) … водящія статьи по русской нефтепромышленности, б) статистическія свѣдѣнія о доб… переработкѣ и экспортѣ русской нефти, в) таковыя-же статистическія свѣдѣнія объ а… риканской нефтепромышленности, г) цѣны на главнѣйшихъ рынкахъ на нефтяные п… дукты въ Россіи и за границей и д) мелкія замѣтки, сообщенія и статьи, до нефтяной промышленности относящіяся.

Подписныя деньги адресуются; г. Баку, въ контору газеты „Каспій“, д. Красил… никова. Въ Тифлисѣ подписка принимается при редакціи газеты „Тифлисскій Листокъ“

3—3

Редакторъ Н. Соколинскій

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւ) սիֆիլիսի և աչքացաւի:
ՌՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—$11^1/_2$—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՄՈՒԽԱՐԻՆՍԿԱՅԱ—12—$12^1/_2$ ժ., կանանց և ներքին ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—$12^1/_2$—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՈՄՍԿԻ—5—$6^1/_2$ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոթերապիա):
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Վճար—50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) համար առանձին:
Հերթակալ բժիշկ—երեկ. ժ. 9-ից մինչև առ. ժ. 7-ը:

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՊՐՕՎԻԶՕՐ **Ա. ՇՏԷԽԷՐԻ** ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՉԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Դեղագործական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ և պ. պ. Շահպարօնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ազմուրօվի դեղատներում:

ЗУБНЫЯ КАПЛИ: кор. 50 к.
ЗУБНОЙ ПОРОШОКЪ: кор. 30 к.
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ: фл. 80 к.
А. ШТЕХЕРЪ

39—52 (հ.)

„ՄԻՇՈՒՆԱՑ“

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՌԻՍ ԳՈՒՍՏԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բաքու… Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ:

14—50 (հ)